Կաթն ինչպէս պէտք է խմել։—Կաթը ջրի նման գլխին քաշել ու խմել միանգամից ոչ միայն չըպէտք է, այլև, հաստատապէս կարելի է ասել, վնասակար է. որովհետև եթէ միանգամով մեծ քանակութեամբ կաթ է մտնում ստամոքսի մէջ, այնտեղ մակարդւում է նշանաւոր զանգուածով, իսկ այդ մակարդուածի վրայ համեմատաբար շատ քիչ ազդեցութիւն է ունենում ստամոքսի հիւթը, որից մարսողութիւնը շատ է դժուարանում։ Բոլորովին դրա հակառակն է լինում, երբ կաթը խմւում է կում-կում և ծանրուբարակ, այնպէս որ մի բաժակ կաթը խմուէր գոնէ առնուազն 5 րոպէի մէջ. վերջին հանգամանքով, այսինքն երբ կում կում է խմւում, կաթը փոքրիկ քանակութիւնով է մակարդւում, ստամոքսի հիւթը հեշտութեամբ է թափանցում մակարդուածի մէջ և մարսւում է առանց որևէ դժուարութեան։

—

Քնելու նոր ձև.—Ամբողջ աշխարհի կողմից ընդունուած սովորութիւն է, որ մարդիկ քնելու ժամանակ գլուխը դնում են բարձերի վրայ, որով մարմնի այդ մասը միշտ բարձր է լինում միւս մասերից։ Սակայն հակառակ այդ սովորութեան ընդհանրացած ու արմատացած լինելուն, գերմանացի Վիլհելմ Ֆիշեր գիտնականը հիմնուելով իր մի շարք փորձերի վրայ, յայտնում է, որ մարմինը կատարեալ հանգստութիւն ստանում է այն դէպքում, երբ գլուխը ոտքերի հետ միևնոյն բարձրութիւնն ունի կամ մինչև անգամ նրանից ցած է։ Գիտնականը խորհուրդ է տալիս այդ բանին վարժուել աստիճանաբար, նախ գլխի տակի բարձերը պակասեցնել, ապա բոլորովին վերցնել և ընդհակառակը այն դնել ոտքերի տակ։ Ըստ գերմանացի գիտնականի, քնի ժամանակ մարմնի այդ դիրքը մասնաւորապէս օգտակար է արեան նուազութիւն և թոյլ ջղեր ունեցող մարդկանց։

—

Անքնութեան դէմ. — Պառկելուց առաջ պէտք է ամբողջ մարմինը մի քանի րոպէ շփել կոշտ բրդէ շորով կամ վրձինով։ Կարելի է շփել բոլոր մարմինը նաև սառը ջրում թաց արած երեսսրբիչով, իսկ դրանից յետոյ կոշտ և ցամաք շորով.կամ երեսսրբիչը թրջած լինի սենեակի ջրով, որի կէսը պէտք է քացախ լինի. կամ սառը վաննա ընդունել 26—28° Ցէլսի և մնալ նստած 20—25 րոպէ։

# VII. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Նիհարացած և թոյլ ձիերին շատ օգտակար է խեցգետնի կճեպները չորացրած և փոշիացրած—մանրացրած խոտի հետ խառն տալ։ Մի քանի ամսից ձիուն ճանաչելը անկարելի է։

—

Ցանելու սերմի որակութիւնը ճանաչելու հնարք.—Փորձելու սերմը դնում են եռացրած երկաթէ թիթեղի (ժեստ) վրայ։ Եթէ հանդարտ, առանց փքուելու—ճղքուելու է այրւում—նշան է, որ անպէտք է և բոլորովին աճելու ընդունակութիւնից զուրկ. իսկ ընդհակառակը եթէ փըքւում, այրւում է թռչելով և ճղքւում, կը նշանակէ, որ աճելու յատկութիւն ունի։

—

Սարդից, մըջիւններից և այլ միջատներից ազատուելու ամենալաւ միջոցը՝ մէկ մաս շիբը, չորս մաս եռացրած ջրում հալելուց յետոյ. այդ խառնուրդը, միջատների բուն դրած տեղերում սրսկելն է։

—

Պտուղները և ծաղիկները որդերից ազատելու համար, պէտք է պտուղները մի քանի անգամ թաց անել օշինդր խոտի (պօլինի) թրմոցով (նաստօի) և ծաղիկներին նոյնպիսի փոշի ցանել։ Նկատուած է, որ այդպիսով պտուղները մինչև հասնելը, որդներից չեն փչանում, իսկ ծաղիկների որդները այդ փոշուց ոչնչանում են։

—

Սերմերին շուտ ծլելու և լաւ պտուղ տալու հնարք.—Ցանելու սերմը մի քանի օր պիտի թաց անել կրաջրի մէջ, որի մէջ 1—2 օր հանգած կիրը հալուած լինի։

—

Հաւերի բները վատհոտից մաքրելու համար, պէտք է յաճախ լուանալ կրաջրով, որը հաւին և առողջութեանը վնասող ծերտի հոտը անմիջապէս մաքրում է։

—

Մկների դէմ միջոց.—Ամեն տարի ներքնատան առաստաղը և պատերը ծեփում են ժանգառը (ժելէզնիկուպարօս) կրախառն և պատերի ծակերը և ճեղքերը լցնում են ժանգառի կտորներից (կրիստալնի կուպարօս), իսկ յատակը այդ կտորների փոշիով։

Մկների դէմ նոյնպէս լաւ է ներգործում և ծովային սոխը (scilla maritima), որը դեղատներումն են վաճառում։ Այս դեղը մանրացնում են իւղով կամ ճարպով տապակում են և մկներ շատ եղած տեղերում ամաններով դնում։

—

Թռչունների ձու դնելու ժամանակամիջոցը.—Հաւը 21 օրումն է ձագ հանում, հնդկահաւը 25 օրում, բադը 28 օրում, սագերը 30 օրում. միայն թէ թխսի տաքութիւնը 30/35 Ռէօմիւրի աստիճանից ոչ աւելի և ոչ պակաս պէտք է լինի։

—

*Հաւերի ձու ածելը.*—Երեք տարեկան հաւերն աւելի շատ են ձու ածում, չորս տարեկան հաւը սակաւ է ածում, թէև ածած ձուաներն էլ խոշոր են լինում, սակայն այնուհետև տարէցտարի ձու քիչ է ածում։ Հինգ տարեկան հաւերը թէև երեք տարեկանի չափ կուտ են ուտում, բայց և այնպէս նրանցից շատ քիչ են ածում, բացի այդ ջահել հաւերը ոչ միայն գարնանը, այլև աշնանը ու ձմեռն էլ են ածում, այն ինչ պառաւած հաւերը ձմեռն ամենևին չեն ածում։ Սրանից պարզ երևում է, որ տնտեսական տեսակէտից ձեռնտու չէ 4 տարեկան հաւեր պահել, այլ ձու ածելու համար պէտք է պահել 2 կամ 3 տարեկանները։

—

*Մի ուրիշ հնարք.*—Տասը լիտր անձրևի ջրի մէջ, 2 սեղ. գդալ աղէթըթուածին (սօլեաննի կիսլատայ), խառնիր և մէջը երկու օր ու գիշեր, ցանելու սերմը թաց արա։ Փորձը ցոյց տուեց, որ այսպէս թաց անելով սերմերը ծլում են ոչ թէ միայն ահագին քանակութեամբ, բայց և աւելի վաղ, քան առանց թրջելու։ Հին կարծրապինդ սերմերը պէտք է աւելի երկար պահել թրջած։ Ցանելուց առաջ պէտք է թրջած սերմը ցամաք աւազով մի փոքր ցամաքացնել։



† Ռուսաց արտաքին գործոց նախարար
ԼՈԲԱՆՈՎ-ՌՕՍՏՈՎՍԿԻ։

# VIII. ՏԱՆՏԻԿԻՆ

*Ինչպէս իմանալ խմելու ջրի պիտանացու լինելը.*—Թէ որքան մաքուր է խմելու ջուրը, պէտք է մի շատ մաքուր շշի մէջ կիսով չափ ջուր ածել և մի փոքր կտոր ամենալաւ տեսակի շաքար ձգել։ Շիշը թղթէ խըցանով ծածկելուց յետոյ պէտք է արևի տակ դնել։ Եթէ ութ կամ տասն օրից ջուրը պղտորուի, նշանակում է որ նրա մէջ գտնւում են այլ և այլ վնասակար օրգանական մարմիններ, ուրեմն այդ ջուրը առանց առողջութեանը վնասելու գործածել անկարելի է։

—

*Միսը թարմ պահելու միջոց.*—Որպէս զի հնար լինի տաք եղանակին միսը թարմ պահպանել ոչ միայն մի քանի, այլ 1—2 շաբաթ, հարկաւոր է միսը դնել ծաղկամանում կամ լայնաբերան պուլիկի մէջ և վըրան եռացած ջուր ածել, որի հետ պէտք է խառնել մի քիչ երկաթի խերխուկ։ Բայց որպէս զի միսը բոլորովին ազատ լինի օդի ազդեցութիւնից, ջրի վրայ պէտք է մի շերտ իւղ՝ ևս ածել։

—

*Լուաններից և փայտօջիլից ազատուելու միջոց.*—$1^1/_4$ ղըրվանքայ սպիտակ ռուսաց բևեկնայ իւղ, 6 մսխալ շերտաւոր (կրիստալիչեսկի) կարբօլեան թթւուտ և 1 մսխալ սալիցիլեան թթւուտ։ Այս խառնուրդը պէտք է քամել և վրձինով օծել պատերը, մահճակալը և փայտօջիլ գտնուած տեղերը։

—

*Մկներին տանից հեռացնելու միջոց.*—Մի գերմանացի հետևեալ փորձն արաւ։ Երկու կենդանի մկներին, բացի իրանց գլխներից ամբողջովին նաւթով թաթախեց և կըրկին նրանց իրանց ծակերում թողեց։ Թէև նա չիմացաւ նրանց ինչ պատահեց, բայց թէ դրանից յետոյ իր տանը, որը՝ որ շատ հին էլ էր, այլ ևս մկներ չէին յայտնւում։ Նա կարծում է, որ պատճառը իրանց—մկների երկու ընկերակիցների թշուառ վիճակն էր, որից սարսափացած նրանք տեղափոխուեցան ուրիշ աւելի ապահով տեղ։

—

Մեռաքսէ, իրդէ և բամբակի գործուածներից թանաքի բիծը, բևեկնայ իւղով (սկիպիդար) շատ հեշտ է հանւում։

—

*Կաթի մէջ ջուր խառնած լինելն իմանալու համար*—պէտք է կաթնամանի մէջ կաթով լաւ թաթախել գուլպայ գործելու հարթ միլը—ճաղը (гладкую вязальную спицу) և իսկոյն հանելով, գլխիվայր դրութեամբ բռնել։

Եթէ կաթի մէջ ջուր չկայ—եթէ կաթը անարատ է, ամանից հանած միլի

—ճաղի (спицы) վրայ կաթը կնշմարուի. իսկ եթէ կաթի մէջ թէկուզ շատ քիչ լինի ջուրը, այնու ամենայնիւ այդ մխի վրայ կաթ չի մնայ։ Այս հնարքը շատ հասարակ է և շատ հեշտութեամբ կարելի է փորձել։

—

Պինդ միսը հեշտ կ'եփուի և կը փափկանայ, եթէ ջրին մի փոքր քացախ աւելացնուի։

Հոտած ձկան և մսի, համը և հոտը ոչնչացնելու համար, մի քանի ժամ, մէկ երկու բուռն թխտենու—կեչի (բերեօզա) փայտի ածխի փոշէ խառն թարմ ջրի մէջ դնելու է։

—

Լուսամուտների ճեղքերի ծեփ ձմեռուայ համար.—Պէտք է մէկ բաժակ հաճարի (րժանօյի) ալիւրից, երկու բաժակ շատ բարակ աւազից և որքան հարկաւորուի եռացած ջրից խմոր շինուի և սեղանի դանակով կամ հարթ փայտի կտորով, լուսամուտների ճեղքերը լցնուի։

Այս խառնուրդը վերջը շատ հեշտութեամբ է պոկվում և պէտք է իմանալ, որ աւելորդ աւազով ծեփը աւելի փխրուն է լինում, իսկ աւելորդ ալիւրով, չափազանց կոշտ և պինդ։



# IX. ԳԻՒՏ եւ ԱՐՈՒԵՍՏ

Ձիուն զսպելու հնարք.—Նալնել, լծել կամ իրան թամքել չ'թոյլատող ձիու ականջին պէտքէ կլորիկ կայծաքար չախմախի քար (կրեմնեվի կամեն) դնել, որի ժամանակ պէտք է ականջը բռնել և ձիուն շփել։ Եթէ միւս ականջում էլ այդպիսի քար դնուի՝ ձին աւելի կը հանդարտուի։

—

Թաց ոտնամանները հեշտ և շուտ—կ'չորանան, եթէ երեկոյեան նրանց մէջ վարսակ-գարի լցնուի, որով առաւօտեան գործածելու համար արդէն պատրաստ կլինին։

—

Հասարակ և հեշտ միջոց մետաղէ գրիչները մաքրելու.—Երբ գրիչը աղտոտւում է, անմիջապէս պէտք է կրակի վրայ մի քանի վայրկեան բռնել, որից չորանալով աղտը կ'մաքրուի։ Միայն շատ երկար ժամանակ չպէտք է բռնել կրակի վրայ, այլ ընդհատելով։

—

Լուսամուտների ապակիները սառչելուց պահպանելու համար—պէտք է պատրաստել մի մաս գլիցերինից և երեք մաս սպիրտից մի խառնուրդ, որը լաւ հարելով, յետոյ մաքուր և փափուկ փոքրիկ ոստով (վիտօչկայ) օծում են, լուսամուտների ապակիները. միայն թէ ապակիները առաջուց պէտք է լաւ մաքրած և չորացրած լինին։

—

Խրիմցի մի վաճառականի կին իր ունեցած ջղային—կանացի հիւանդութեան խստացած ժամանակը կուլ տալիս է եղել այնպիսի իրեր, ինչպիսիք են, պատառաքաղ, թէյի գդալներ, մեխեր, երկաթի կտոր ապակի և այլն։ Այս կուլ տուած իրերը այդ կնոջը սաստիկ փորի ցաւ էին առաջ բերել։ Այս տարուայ յունիսի 6-ին այդ ցաւից ազատելու համար, այդ կնոջ ամուսինը կընոջը Օդեսայի «Եւանգելեան» կոչուած հիւանդանոցը տանելով պատմեց բոլոր եղելութիւնը։ Ներկայ եղողները ի հարկէ չ'հաւատացին. բայց ինչպէս զարմացան բոլորը երբ բժիշկ Ֆրէկերը քննեց և օպերացիայ անելով մի քանի մարդկանց ներկայութեամբ, հիւանդի ստամոքսից հանեց 37 իր, 'ի միջի այլոց պատառաքաղ, երկաթի կտորներ, երկու թէյի գդալներ, ասեղ, հաշխայի կտոր, երկու մեխ, ապակու կտորներ կոճակներ և այլն։ Այդ իրեղէնները գտնւում են հիւանդանոցի դրասենեակում, որտեղ ամեն հետաքրքրուող կարող է գնալ և տեսնել։ Բժշկի ասելով այդ իրերը երեք ամսից աւելի են մնացել հիւանդի փորում։ Հիւանդը առողջանալու վրայ է։ Նա 35 տարեկան է, և ազգով կարայիմկայ։ Նա մարդու է գնացել 17 տարեկան հասակում և ծընել է 8 տղայ 1 աղջիկ, որոնցից այժմ կենդանի են մնացած միայն 4 տղայ և մէկ աղջիկ։ Վերջին ծնունդը երկուորեակ էր։ Բժշկականութեան մէջ մինչև այժմ այսպիսի դէպք չըտեսնուած իրողութիւն էր։

—

Սեղանի մետաղէ սեւացած իրերը մաքրելու համար, պէտք է 5 մաս սօդան 100 մաս ջրի մէջ հալած և դրանով օծել—մաքրել գդալները, դանակները, պատառաքաղները և այլն, նամանաւանդ նրանք, որոնք թթուից են սեւացել։



Անգլիայի Թագուհի ՎԻԿՏՈՐԻԱՆ

# X. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԴԷՊՔ.—Վարշաւում, «Սվետ» լրագրի ասելով, մի վերին աստիճանի խորհրդաւոր և հետաքրքիր դէպք է պատահել, որը հաստատում են շատ վկաներ։ Մարշալկովսկայա փողոցի № 149 տան մէջ ապրող Լ. ընտանիքն իրենց երեխայի համար իբրև դայեակ վարձել էր մի 16 տարեկան աղջիկ Մարիանա Գ. անունով։ Մարիանան իւր պաշտօնը ստանձեց մի երեկոյ, երբ տան տիկնոջ մօտ միքանի հիւրեր կային։ Նրա Լ-ի տուն մտնելու րոպէից, երեխան, որի դայեակը պիտի լինէր, սկսեց սաստիկ լաց լինել և առհասարակ անկանոն մի դրութիւն արտայայտել, մինչդեռ այդ երեխան առաջ բոլորովին առողջ էր և քնում էր հանգիստ։ Կամենալով այդ առթիւ միքանի խորհուրդներ տալ դայեակին, պ. Լ.-ն հրամայեց Մարիանին կանչել իւր առանձնասենեակը, ուր գտնւում էին և հիւրեր վեց հոգի։ Աղջիկը մտաւ սենեակը և կանգնեց մէջ տեղում։ Այստեղ նոյն րոպէին մի խիստ տարօրինակ և անհասկանալի բան պատահեց։ Գրադարակի վրայ դրուած չվառուած լամպը աղմկալի կերպով թռաւ և ընկաւ յատակի վրայ, պատերից միաժամանակ վայր ընկան երկու նկարներ, սեղանի վրայ դրուած բաժակների հետ նոյնը պատահեց, իսկ լուսամուտի մօտ կախուած ջերմաչափը գամով միասին պոկուեցաւ ու թռաւ սենեակի խորքը։ Ներկայ եղողներին անպատմելի սարսափ տիրեց։ Տան տէրը որ բաւական առնասիրտ մէկն էր, առաջինն ուշքի եկաւ և հանգստացնելով ներկայ եղողներին, սկսեց հետախուզել այդ խորհրդաւոր

դէպքը, բայց աւելի սկսեց մօտիկ ծանօթանալ Մարիանի անձնաւորութեան հետ։ Յայտնուեցաւ, որ Մարիանան, գեղեցիկ բնաւորութեան ու բարքի տէր աղջիկ լինելով, նուաղարին է, տանջւում է անքնութիւնից և հալիւցինացիաների է ենթարկւում։ Այն տան մէջ, ուր նա ծառայում էր, շատ անգամ նկատուած էին այդպիսի անբնական երևոյթներ, որոնց նշանակութիւնն ու պատճառը, ոչ ոք չէր կարողանում բացատրել։ Վերոյիշեալ դէպքի մանրամասնութիւնները, ներկայ եղողների հասցէների հետ միասին, հաղորդուած են բժ. Օխորովիչին, գիտնական հետազօտութիւն կատարելու համար։

---

ԱՄԵՆԱՀԻՆ ԴԵՂԱՏՈՄՍԸ ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ, որ մինչև այժմ պահպանւում է, գտնուած է անգլիական մի թանգարանում և արտագրուած է պապիրուսից։ Այդ դեղատոմսը գրուած է Քրիստոսի ծննդից 4000 տարի առաջ, Հատի թագուհու համար, որ Եգիպտոսի փարաւոններից տասնուերկուերորդի մայրն էր։ Դեղատոմսի վրայ նշանակուած է. «շան թաթ՝ մի հատ, արմաւ—մի հատ. խողի սմբեղ—մի հատ. այս բոլորը լաւ եփել իւղի մէջ, յետոյ իւղը պինդ քսել գլխի կաշուի վրայ»։ Այս խառնուրդը այն ժամանակներում ամենալաւ դեղն էր համարւում մազերը թափուելու դէմ։

---

ԻՆՉՔԱՆ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ Է ՎԱԶՈՒՄ ՊԱՐՈՂ ԿԻՆԸ.—Մի անգլիացի գիտնական հաշուել է. մի գիշերուայ մէջ պարահանդէսի ժամանակ պարող կինը վազում է առնուազն 30 վերստ տարածութիւն։ Դրան պէտք է աւելացնել, որ նա պարում է սեղմիրանով (կորսէթ), որը դժուարացնում է նրա շարժումները, պարում է ոտների մատների վրայ և շնչում է ապականուած օդ։ Այն ինչ եթէ այդպիսի մի կնոջ առաջարկէք, որ անցնէ այդ տարածութեան կէսը հարթ ճանապարհով, յարմարաւոր ճանապարհով և հանդարտ քայլերով, նա ան-



շուշտ կասէ, որ իւր ոտքերը շատ թոյլ են՝ այդպիսի մի անհագին ճանապարհ, ոտով գնալու համար։

---

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՈՐԿՈՐ.—Սիդնէի համալսարանի պրոֆէսոր Անդերսոն Շտիւարտը հնարել է արհեստական որկոր։ Դա մի գործիք է, որ ըստ ցանկութեան կարող է լինել տենոր, բարիտոն և բաս կամ կանանց ձայն՝ սոպրանօ և կոնտրալտո։

---

ՕԴԱՅԻՆ ՆԱՒ.—Գիտնականներին ներկայումս սաստիկ զբաղեցնող հարցերից մինն ևս օդագնաց գործիք հնարելն է, որի շատ տեսակները թէև արդէն գոյութիւն ունին, սակայն դրանց ամենին էլ պակասում է այն կատարելագործութիւնը, որով կարելի լինի նրանց շարժումները կանոնաւորել և ենթարկել մարդու ազատ կամքին։ Ահա օդագնաց գործիքների այդ նշանաւոր պակասութիւնն է, որ կարծես կարողացել է հեռացնել Բերլինի Վիւրտենբերգի նախկին դեսպան գրաֆ Ցեպելինը։ Ընտիր հանդիսականների առաջ, ուր ներկայ էին նաև Վիւրտենբերգի թագաւորը, մինիստրներն և Շտուտգարդի տեղապահ զօրքի սպաները, գրաֆ Ցիպպելինը յայտնեց, որ ինքը գտել է օդային նաւը ղեկավարելու հնարքը։ Իւր գիւտի մատակարարելիք բոլոր օգուտները Գերմանիային յատկացնելով, գրաֆը դիմել է պրուսական մինիստրութեան, խնդրելով, որ իւր հնարած գործիքը փորձեն։ Սակայն մինիստրը, ի նկատի առնելով որ Ցեպպելինի հնարած օդային նաւի շինութիւնը մեծամեծ ծախքերի է կարօտում, մերժեց, որի պատճառով գրաֆը ստիպուեցաւ դիմել հասարակութեան օգնութեան։ Օդային նաւի շինութիւնը պահանջում է մօտ մէկ միլիօն մարկ. պիտի կարուած լինի մետաքսեայ կտորից և պիտի լցուի դօկտ. Բերսոնի հնարած մի տեսակ գազային բաղադրութեամբ։ Ղեկավարի ցանկութեամբ օդանաւը կարող է բարձրանալ մինչև 9000 մետր, նրա վրայ չպիտի կարողանան ազդել անձրևներն

ու ձիւնը և պիտի կարողանայ մի րոպէի մէջ $12\frac{1}{2}$ մետր տարածութիւն անցնել։ Օդանաւ մեքենաները պէտք է շինուած լինին ալլիւմինեա մետաղից. նա պէտք է լինի երկայնաձև և իր մէջ պէտք է ունենայ գազաչափ։ Ինչպէս գրաֆը հաւատացնում է, իւր օդանաւը կարող է ամբողջ շաբաթ օդի մէջ շրջել և 24 ժամուայ ընթացքում բարձրանալ հազար կիլոմետր։

---

ԾԻԾԱՂ ՑԱՐՈՒՑԱՆՈՂ ԲՈՅՍ.—Բնագէտ Պուլգրաֆի ասելով, այդ բոյսը մօտերս գտնուած է Արաբիայում։ Դա մի թուփ է պայծառ-կանաչ տերևներով։ Թուփը պտուղ է տալիս. պտղի մէջ կայ երկուսից մինչև երեք սև սերմ, և այդ սերմերն իրենց մէջ պարունակում են ծիծաղ յարուցանող բաղադրութիւն։ Պտղի հիւթը քաղցր է և յիշեցնում է աֆիոնը։ Պտուղը չորացնում են, ծեծում փոշի են դարձնում և ընդունում են փոքր քանակութեամբ։ Պուլգրաֆը Կազենում և Օսմանում փորձել է, թէ ինչ ազդեցութիւն է ունենում նա մարդկանց վրայ։ Բաւական է որ մարդ կուլ տայ այդ փոշուց մի պտղուց, և նա իսկոյն սկսում է սաստիկ ծիծաղել, որ հիստերիկայի է հասնում։ «Ուրախ տրամադրութիւնը հետզհետէ աւելանում է,—ասում է Պուլգրաֆը. մարդիկ ոստոստում են, վազվզում, պար են գալիս, երգում և այդ բոլոր ժամանակ շարունակ ծիծաղում են ամենաուժեղ ծիծաղով։ Այդ դրութիւնը տևում է մօտ մի ժամ և այնուհետև ընդհանուր կաշկանդումն է տիրում, իսկ վերջը սովորաբար երկարատև քուն է գալիս մարդու վրայ։ Երբ զարթնում են, ոչինչ չեն յիշում, թէ քնից առաջ ինչ է պատահել»։

---

ՄԵԾԱԳԻՆ ՊԱՐԳԵՒ.—Ներկայ փետրուարին Աւղանիստանի էմիրը անգլիական թագուհուն ուղարկել է զանազան շալեր, մետաքսեայ գործուածներ և ուրիշ թանկագին իրեղէններ, որոնց բոլորի արժողութիւնը հասնում է 3,250,000 ֆր.։



Այդպիսի թանկագին նուէր մինչև այժմ ստացած չէ Վիկտորիա թագուհին, գուցէ ինքնակալներից և ոչ ոք։

---

ԿԻԶԻՉ ԾԱՌ.—Բիրմայից Հնդկաստան է բերուել մի ծառ, որի տերևներն այրում են մարմնի կաշին նրան ձեռք տրուած ժամանակ։ Այրուածի ցաւը շարունակւում է ամիսներ և աւելի սաստկանում անձրևային եղանակներին ու այրուած մասը ջրի դիպցնելիս։ Տեղացիները սաստիկ վախում են այդ ծառից և զգուշանում են նրան մօտենալուց։ Իսկ անասունները, օրինակ, ձին, շունը նրան դիպչելով կատաղում են և սկսում ատամներով իրենց մարմնի մսերը պոկոտել։

---

ՄԿԱՆ ԿԵՆԴԱՆԱՆԱԼԸ.—Նիւ-Եօրկի թերթերի ասելով, մի խորհրդաւոր դէպք է պատահել տեղւոյն Պրոֆեսոր Մաքս Օստերբերգի լաբորատորիայում։ Պրոֆեսորը պատրաստւում էր Ռեօնտգենի գտած իքս-ճառագայթներով հանել մի մկան կմախքի լուսանկարը և այդ նպատակով նա կենդանի մկանը նախապէս խեղդեց ջրով լի մի ամանի մէջ։ Մի քառորդ ժամից աւելի մուկը գտնւում էր ամանի մէջ, և երբ պրոֆեսորը հանեց ջրից, նա արդէն բոլորովին սատկած էր երևում և մօտ երկու ժամ ընկած էր սեղանի վրայ առանց կենդանութեան որևէ նշոյլ ցոյց տալու։ Պրոֆ. Օստերբերգը մուկը սատկած համարելով, սկսեց նրա կմախքի լուսանկարը հանել։ Նա սատկած կենդանին դրեց զգայուն թիթեղ ունեցող արկղիկի վրայ, Կրուկսի լուսատու գործիքն ուղղեց դէպի նա և դուրս գնաց լաբորատորիայից։ Մէկ ու կէս ժամից վերադառնալով, պրոֆեսորը նկատեց, որ մուկը կարծես թէ փոխել է իւր մարմնի դիրքը ճառագայթների վերաբերմամբ։ Այդ հանգամանքը խիստ հետաքրքրեց ամերիկացի գիտնականին։ Նա սկսեց դիտել մկանը և չհաւատաց իւր աչքերին, երբ տեսաւ, որ սատակած մուկը սկսեց շարժուել և կարծես թէ ջանք

էր գործ դնում մօտենալու Կրուկսի գործիքին։ Միքանի ժամանակ անցնելուց յետոյ, մուկը բոլորովին կենդանացաւ և հետևեալ օրն իւր վանդակի մէջ վերջնականապէս կազդուրուած էր։ Այս դէպքի վրայ ամերիկացի պրոֆեսորը միտք յղացաւ մի շարք փորձեր կատարել իմանալու համար, թէ իքս-ճառագայթներն արդեօք յատկութիւն չունին, բռնի մահով մեռած մարմիններին կենդանութիւն ներշնչելու։

---

ՄԻ ՀԱՐԲԵՑՈՂԻ ՍԵՐՈՒՆԴԸ.—Պրոֆեսոր Պեստմանը (Բոննից) խիստ հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում, մի գինեմոլից առաջացած սերնդի մասին։ Մի գող թափառաշրջիկ գինեմոլուհուց, Ադա Իւրկէ անունով որ ծնուած էր 1740 թուին և մեռել է անցեալ դարու սկզբում, սերուած է 834 հոգի։ Գիտնականին յաջողուել է այդ սերնդի միայն 709 անդամի վերաբերմամբ տեղեկութիւններ հաւաքել, որոնցից 106-ը ծնունդ էր ապօրինի ամուսնութեան, 142-ը տառապում էր յետին աղքատութեան մէջ, 64-ը ապրում՝ էր թշուառներին յատկացուած կայարաններում, և վերջապէս 76 հոգին իբրև յանցապարտներ դատապարտուել է բանտարկութեան, որոնցից 7-ը ոճրագործ է եղել։ 75 տարուայ ընթացքում այդ ընտանիքը կառավարութեան նստել է աւելի, քան 5 միլիօն մարկ, հաշուելով դրա մէջ այդ տոհմի աղքատներին բաշխուած օգնութիւնը, բանտարկուածների պահպանումը և նրանց գործած յանցանքներից յառաջացած վնասները։

---

ՄՈՑԻՔՈՒԼ-ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.—Ամերիկայում կազմուել է «Ալցիօն» անունով մի ընկերութիւն, որ ցանկացողների համար յարմարաւոր հարսնացուներ ու փեսացուներ է ճարում։ Այդ ընկերութիւնը լրագրների մէջ հրատարակում է հարսնացուների և փեսացուների մանրամասն կենսագրութիւնը և իւր պրէյս-կուրանտը։ Ահա նմուշներ նրա հրատարակած յայտարարութիւններից.



Ոըը աղջիկ, ծնուած է Նիւ-Օրլէանում, ուրախ բնաւորութեան տէր. ընդունակ սաստիկ սիրելու։ Ապրում է մի ընտանիքի մէջ, որ որդեգրել է նրան։ Կ'ամուսնանայ ամէն մի մարդու հետ, ով կըհանի նրան իւր այժմեան շրջանից»։

«Բարեկիրթ ջենտըլմեն, ազնիւ, բայց աղքատացած ցեղից, կօսմոպոլիտ է ոտից ցգլուխ. խօսում է ինը լեզուով. ցանկանում է ամուսնանալ նորատի, հարուստ, գեղեցիկ, հասարակական նշանաւոր դիրք ունեցող կնոջ հետ։ Չպէտք է հարցուփորձ անել նրա անցեալի մասին, որովհետև այդպիսի հարցուփորձերը կը նորոգեն նրա ծանր յիշատակները»։

Այս երկու յայտարարութիւններին կցուած են ամուսնանալ ցանկացողների պատկերները։ Նրանց համար, որոնք կըցանկային դիմել յիշեալ մոցիքուլ ընկերութեանը, այստեղ դնում ենք պրէյս-կուրանտն ու ճիշտ հասցէն.

Գ Ն Ե Ր Ը.

| | | | |
|---|---|---|---|
| 30 տարեկանից պակաս | 250 Ֆր. | | Վճարւում է մի անգամ |
| 30-ի և 45-ի միջև | 300 » | | |
| 45-ի և 60-ի » | 375 » | | |
| 60-ի և 100-ի » | 475 » | | |

Սկզբնական վճարը 125 Ֆր., յամենայն դէպս։ Դիմել՝ «Ալցիօն» ընկերութեան։ Ի Նիւ-Եօրկ։

---

ՅՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅԸ ԶԱՆԱԶԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԷՋ.—Գիշակեր կենդանիների արգանդում ճուտը աւելի է զարգացած քան խոտակերների։ Առաջիններից ծնուածները ծընւելիս աւելի քիչ են զարգացած, նրանց աչքերը մի քանի օրից են բացւում։ Խոտակեր կենդանիները.—փղերի յղութիւնը տևում է 24 ամիս. ռնգեղջրի—18 ամիս. ընձուղտի—14 ամիս. Ձիու և ուղտինը—11-13 ամիս. գոմէշի—12. իշու—12. կովի և եղջերուի—9 ամիս. մի քանի փոքր կապիկներինը 8 ամիս. ոչխարի և այծի—5. խոզի—4. մինե-

րու—28 օր. ճագարի 20-21. ծովային խոզի—21 օր: Գիշակեր կենդանիները.—արջի—6 ամիս, առիւծը—108 օր. աղուէսի, գայլի և շան—62-63 օր. կատուինը 55-56 օր. կէտ ձուկը մօտ 10 ամիս: Ձու դնող կենդանիները.—սագերը Թուխս են նստում 30 օր. հաւերը—21 օր. բադը 30 օր. հնդուհաւը—28 օր. դեղձանիկը 14 օր. աղաւնիները—12 օր. Թութակը 40 օր:

---

Մարօկօյի սուլթանը մօտ 6000 կին ունի, որոնք բնակւում են երեք գլխաւոր քաղաքներում: Երկրորդ տեղը Աշանտացոց Թագաւորն է բռնում, որ ունի 3000 կին: Սիամի Թագաւորին 600, Պարսից Շահինը 400, Տաճկաց Սուլթանին 300 և Դահոմէի Սուլթանին 250 կին:

---

ՄԱՐԴԿԱՆՑ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՅԺԸ.—Մարդկանց ոյժը ծանրութիւնը տանելու մէջ՝ համեմատաբար հետևեալն է. մարդու ոյժը 1, եզջերուի 3, էշի 4, ձիունը 8, ուխտինը 31 և փղինը 147:

---

ՄԵՂՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.—Մի գիտնական հաստատում է, որ մի գրուանքայ մեղր հաւաքելու համար մեղուն 4,000,000 առոյտ խոտի (տրիլիստնիկ) ծաղիկ պէտք է ծծի:

---

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.—Սարդերը և տզրուկները իւրաքանչիւր անգամ 107-ական ձու են ածում. ճանճը միանգամից 144 ձու, կրեան—1000, գորտը—1000, քոսի որդը (կլեշչ)—50000 ձու: Այս դէպքում, ձկներն էլ հետ չեն մնում. պերկը (օկուն)—9943 ձու է դնում. փայլունկը—տառեխը (սիլեօդկայ)—35000, գետակը (սազան, կարպ)—342000, գինկան (լին)—383000, վահանաձուկը (կամբալա)—100000, մանրաձուկը (ПЛОТВА)—113000, չուքան (ստերլեադ)—600000. հաստատում են, որ մծակները միլիոնից աւելի ձու են ածում:

---

# XI. ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

## 1) ՁՈՒԱՐՃԱԼԻ ՓՈՐՁ ԱՊԵԼՍԻՆԻ ՎՐԱՅ

Ընտրեցէք մի խոշոր և հաստակեղև ապելսին, նրա կեղևի վրայ սուր գրչահատով կտրուածքներ արէք, ինչպէս ցոյց է տրուած պատկերի վրայ: Առաջ մի հասարակ կտրուածք արէք (1), յետոյ երկերկու (2), որից կստանաք երկու նեղ երիզ: Յետոյ երկու կլորուածք արէք վերևից և ներքևից ապելսինի շուրջը (3) և վերջապէս մէջից կտրելով երկու հաւասար բաժին արէք (4), բայց այդ անելիս՝ կեղևի առաջուան նեղ երիզներին վնաս չտաք, չկտրէք: Ի՞նչ ասել կուզի, որ կտրուածքները պէտք է անել բոլոր ապելսինի վրայ բոլորի շուրջ, այսինքն նրա և այն երեսին, որ մեր պատկերի վրայ չի երևում:


1
2
3
4



Այս բոլոր գործողութիւնը կատարելուց յետոյ (որ առհասարակ լաւ է յաջողւում փոքր ինչ ընտելանալուց յետոյ), դուք կը հանէք ապելսինի միջուկը և անուշ կանէք, իսկ դատարկ կեղևը կստանայ այն տարօրինակ ձևը, որ ցոյց է տրուած այս պատկերի վրայ:

---

2) ԴԵԻՒ ՈՅԺ ԿԱՄ ՔԱՐԸ ՍԵՂՄԵԼՈՎ ՋՈՒՐ ՀԱՆԵԼ.—Այս փորձը կատարելու համար պէտք է վաղօրօք պատրաստի ունենալ փոքրիկ թրջած սպունգի կամ բամբակի կտորներ ականջի յետին կողմը թաքցրած։ Վերցրէք մի որ և է պինդ մարմին՝ քար, դանակ կամ ինչ որ ձեր դիմացի հետաքրքիր պարոնը կառաջարկէ։ Յետ քաշեցէք թևքերդ և աւելի կախարդական ձև տալու համար, շփեցէք քարը ձեռքներիդ մէջ, յետոյ բռունցքը սեղմած բարձրացրէք մինչև աջ քունքը։ Խնդրեցէք դիմացիններիդ, որին ցանկանում էք դևի չափ ոյժներդ հաստատել, որ ձեր արմունկին երեք անգամ մատով խաչ քաշի. այդ յարմար միջոցին՝ զգուշութեամբ հանեցէք ականջի յետևից թրջած սպունգը և քարի յետ միասին երկու ձեռքով պինդ սեղմեցէք ու ջուրը կսկսէ կաթկաթել։ Որպէսզի հակառակորդըդ գաղտնիքը շուտ չհասկանայ, սեղմելու միջոցին ձախ ձեռքով սպունգը հեռացրէք և գցեցէք ձեր գրպանը, իսկ աջով ցոյց տուէք թաց քարը։ Կատակի համար նոյն գրպանից հանեցէք թաշկինակը և սրբեցէք ձեր կեղծ քրտինքը և թաց ձեռքերը։

Երկու անգամից աւելի չկրկնէք այս բանը մի և նոյն մարդու ներկայութեամբ։

---

ԿԻՆԸ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՅՐՈՒԻՋԻ ՈՐՈՇԵԼՈՎԸ.—Պսակուած կինը նամակ է, որը հասնում է իւր հասցէին։ Օրիորդը—դեռ չուղարկած նամակ։ Այրին—նամակ, որը կարդացւում է ուրիշներից։ Պառաւած աղջիկը—նամակ մինչև ցպահանջ, որը ընկած է լինում փոստային արկղում։

# XII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Վիճակագրական քանի մի եզրակացութիւններ երկրագնդի ազգաբնակութեան մասին։ Երկրագնդի ազգաբնակութիւնն այժմ խօսում է 3,064 լեզու և դաւանում է 1,000 զանազան կրօններ։ Այս բոլոր ազգաբնակութիւնը կազմում է մինչև 1 միլիարդ 500 միլիօն մարդ և այր մարդկանց թիւը, համարեա թէ հաւասար է կանանց թուին։ Ամենայն տարի մեռնում է 35,214,000 մարդ, որ անում է օրը—98,848 մարդ, ժամը—4,0 0 և րոպէն—67։

Մարդկային կեանքի միջին տևողականութիւնը 38 տարուց աւելի չէ, այնպէս որ հազար մարդուց, միջին հաշուով մինչև 100 տարեկան հասակը հասնում է մէկը, իսկ մինչև 60—ոչ աւելի քան 6—7 մարդ։ Երկրագնդիս ազգաբնակութեան մօտ մի քառորդը մեռնում է մինչև տասնևեօթն ամեայ հասակը։ Ամենայն տարի ծնվում են 36,799,000 մարդ, որ միջին թւով անում է—100,800 օրը, 4,200—ժամը և 70—րոպէն։

Ամուսնացած մարդիկ աւելի երկար են ապրում՝ քան թէ ամուրիները, աշխատողներն աւելի՝ քան անգործները։ Քաղաքակիրթ երկրներում կեանքի միջին տևողականութիւնն աւելի մեծ է՝ քան վայրենի երկրներում։ Մահը և ծնունդը աւելի յաճախ գիշերն են կատարվում՝ քան ցերեկը։ (Science pourtous)։

---

Ներկայումս Լոնդոնը իւր արուարձաններով մօտ $6\frac{1}{2}$ միլիօն բնակիչ ունի։ Լոնդոնն աւելի մեծ է, քան Փարիզը, Հռոմը, Վիեննան ու Բերլինը ի միասին վեր առած. քաղաքի շրջապատը հաւասար է մօտ 300 վերստի. փողոցների թիւը 30,000-ի է հասնում, այնպէս որ եթէ այդ բոլոր փողոցներից մի ուղիղ փողոց շինուի, այդ փողոցի երկարութիւնը կը լինի 4,000 վերստ։ Այդ հսկայ քաղաքի մէջ 600,000 հսկայ շինութիւն կայ, որոնց վրայի ծխնելոյզները կատարեալ մի անտառ են ներկայացնում։ Քաղաքում գործածած ածուխի քանակութիւնը 720 միլիօն փութ է։ Եւ դրանով է բացատրվում այն ծխապատ մթնոլորտը, որի մէջ գտնվում է Լոնդոնը։

---

## ԱՄՈՒՐԻՆ ԵՒ ՊՍԱԿՈՒԱԾԸ

Մեռնողների թիւը ամուրիների մէջ համեմատաբար աւելի շատ է, քան պըսակուածների մէջ. ինչպէս 25 տարեկան ամուրին և 50 տարեկան պսակուածը. միայն սրա հակառակ եթէ պսակուածները վաղաժամ են ամուսնացել, հինգ անգամ աւելի շատ են մեռնում քան միևնոյն հասակի ամուրիները։ Ընտանիքում ապրած մարդը շատ քիչ է հակուած խելագարութեան, ինքնասպանութեան և գողութեան, քան միայնակեաց մարդը։ Ընտանեկան կեանքը

և ամեն ուրիշ հանգամանքներում լաւ հետեւանքներ է տալիս։ Կնոջ և երեխաների ազդեցութիւնը յանցագործութիւններից զսպում է—պահում է։ Միլիօն հայերից տարէնը 186 յանցաւորներից աւելի չեն, իսկ այդքան թիւ պսակուած-անզաւակներից — 287 են։ Անզաւակ այրիներից 262 յանցաւորներ, իսկ ամուրիներից 403-ը։

## ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԻՒԸ

| Քաղաք և գիւղօրայք. | Տուն |
|---|---|
| Ադանա և իր գիւղերը | 3,600 |
| Տարսոն | 800 |
| Մէրսին | 150 |
| Սելեւկիա | 200 |
| Սիս | 600 |
| Ղարսբազար | 300 |
| Հաջըն իր գիւղերով | 5,000 |
| Վահկա | 200 |
| Զէյթուն իր գիւղերով | 4,009 |
| Ֆռնուզ | 800 |
| Կապան | 800 |
| Կոկիսոն իր գիւղերով | 1,000 |
| Նփեսոս (Նարբազ) | 200 |
| Էլբիստան իր գիւղերով | 500 |
| Կիւրին | 3,000 |
| Դերէնտէ | 1,000 |
| Աշոտ | 800 |
| Եօզղատ իր գիւղերով | 5,000 |
| Մանճըլըք » » | 2,500 |
| Մարաշ » » | 3,000 |
| Այնթապ | 2,500 |
| Քիլիս | 500 |
| Հալէպ | 600 |
| Անտիոք իր գիւղերով | 2,200 |
| Բէյլէն և իր գիւղերը | 400 |
| Իսկենդերուն | 80 |
| Չօրքմարզուան իր գիւղերով | 3,000 |
| Մամեստիա | 200 |
| Հայ լեռ իր գիւղերով | 2,000 |
| Բէսհնի | 600 |
| Ադիաման իր գիւղերով | 800 |
| Մալաթիա » » | 3,000 |
| Դիվրիկ » » | 3,000 |
| Եվերէք » » | 600 |
| Ընդհանուր գումար | 53,430 |
| Անձինք | ×5 |
| | 267,150 |



# XIII. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

### 1) Համաշխարհային նշանաւոր անցքերի եւ պատմութեան։

Քրիստոսի ծնունդից առաջ։

12000 Աշխարհիս ստեղծագործութիւնը—ըստ եւրոպացւոց (թէև գիտնականները միլիօնաւոր տարիներ են հաշւում):
5509—Ըստ Աստուածաշնչի։
5490—Ըստ հրէից։
3258 Ջրհեղեղ։
2941 Չինացւոց տառերի գիւտը։
2640 Նինուէի հիմնելը։
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը։
2300 Եգիպտոսի թագաւորութ. սկիզբը։
2000 Մետաքսի գործածութիւնը։
1700 Եգիպտացւոց մեհենական դրերը։
1750 Բաբելոնի աշտարակաշինութիւնը։
1651 Մովսէս մարգարէն ծնւում է։
1600 Ապակիի գիւտը։
1500 Աթենքի հիմնարկութիւնը։
1200 Դարբնական արուեստի սկիզբը։
1150 Տպագրութիւնը Չինաց մէջ։
1056 Դաւիթը թագաւորում է։
1017 Սողոմոնը թագաւորում է։
1010 Սողոմոնի տաճարի շինութիւնը։
1000 Փայտի վրայ փորագրութ. սկիզբը։
982 Սողոմոնի մահը։
800 Արծաթ փողի գործածութիւնը։
802 Ասորեստանի թագաւոր. անկումը։
754 Հռոմուլոսը հիմնում է Հռոմը։
721 Իսրայելացւոց թագաւ. անկումը։
585 Երուսաղէմի աւերումը Նաբուգոդ.
560 Կիւրոսը հիմն. է Պարսից տէրութ.
558 Կոնֆուկիոսը ծնվում է։
552 Բուդդայականութեան սկիզբը Հնդկաստանում։
523 Աստուածաշունչը թարգմանվում է յոյն լեզուով 70-ից ձեռքով։
469 Սոկրատէսը ծնվում է։
384 Արիստոտէլը ծնվում է։
356 Աղէքս. Մակեդոնացու ծնունդը։
325 Աղէքս. Մակեդոնացու Հայաստանի վրայով արշաւելը Հնդկաստան։
315 Չինական պարսպի շինութ. սկիզբը։
300 Մագաղաթի թուղթը հնարում են։
» Հռոմ. հնարում են աղիւսի շինելը։
160 Չինացւոց բամբակից թուղթ շինելը։
110 Հռոմ. հնարում են սապոն եփելը։
76 Կիկերոնի ժամանակ Տիւրոնը հնարում է շուտ գրելու ձեւը։
70 Վեզուվ հրաբուխի ժայթք. Հերքուլ. և Պոմպէի քաղ. աւերումը։

Քրիստոսից յետոյ։

Յս. Քրիստոսը ծնվում է։
2 Հռոմ. շինում են առաջին ջրաղացը։
34 Յս. Քրիստոսը խաչվում է։
» Հայերը ընդուն. են քրիստոնէութ.
41 Առաք. գրում են աւետարանը։
60 Հռովմում, Ներոնի թագ. ժամանակ շինվում է ապակիի (ամանեղէնի) առաջին գործարանը։
70 Տիտոսը աւերում է Երուսաղէմը։
97 Յովհաննէս աւետարանիչը գրում է Եփեսոսում աւետարանը։
135 Հրէից ցրուելը ամբողջ աշխարհ.
210 Հռովմում առաջին անգամ, լուսա-

մուտներին մէջ ապակի է դնվում։
300 Մեղրամոմից ճրագ. են շինում։
303 Սուրբ Էջմիածնի հիմնելը։
306 Մեծն Կոստանդիանոսը Թագաւոր.
321 Մարտի 7-ից Կիւրակին տօնելը սկսվում է։
325 Առաջին տիեզերական Սբ. ժողովը Նիկիայում Կոստանդիանոսի օրով։
328 Կ. Պօլսոյ հիմնարկութիւնը։
381 Կ. Պօլսոյ տիեզերական Ս. ժողովը։
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածութիւնը սկսվում է։
431 Եփեսոս. երրորդ տիեզ. Սբ. ժող.
451 Քաղկեդոնի ժողովը։
476 Հռովմէացւ. կայսրութ. անկումը։
496 Ֆրանկները ընդուն. են քրիստոն.
550 Շերամի որդն ու մետաքսը առաջին անգամ Եւրոպայ է բերվում։
570 Մահմեդը ծնվում է։
636 Եւրոպայում եղեգէ գրչի տեղ փետրէ գրիչ են սկսում գործածել։
637 Արաբացիք տիրում են Երուսաղ.
650 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելը սկսվում է։
711 Իսպանիան գրաւվ. է Արաբներից։
807 Չինացւոց պէս Եւրոպայի մէջ էլ Թղթի գործածութիւնը սկսվումէ։
850 Արաբացիք շաքար են շինում.
855 Սլաւոնական այբուբենի գիւտը։
870 Յունաց և կաթոլիկաց եկեղեցիները բաժանվում են միմեանցից։
1022 Կուխօ Եւրոպայի երաժիշտը նօտան հնարում է։
1072 Երուսաղ. տիրում են Սելջուկները։
1086 Խաչակրաց արշաւանքի սկիզբը։
1171 Եւրոպայի Վենետիայ քաղաքի մէջ բացվում է առաջին դրամատունը։
1246 Առաջ. բժշկ. ուսումն. Ֆրանսիայ.
1291 Խաչակրաց վերջին արշաւանքը։
1299 Ֆլորենց. սկսում են ակնոցն. շին.
1301 Կողմնացոյցի գիւտը։
1308 Շվէյցարակ. հասարակապետ. հիմն.
1330 Գուտենբերգը, Ֆաուստը և Շեֆերը հնարում են տպագրութիւնը։
1338 Վառօդը գտնում են։
1365 Ասեղը հնարում են։
1380 Թնդանօթի գիւտը։
1384 Լենկթ. արշաւանքն. Ասիայում։
1415 Հուսին այրում են։
1440 Հռովմի Ս. Պետրոս եկեղ. հիմնարկ.
1450 Եւրոպայի մէջ առաջ. գր.քի տպագ.
1453 Տաճիկն. տիրում են Կ. Պօլսին և վերջան. է Բիւզանդակ. կայսրութ.
1464 Նամակատուն և փօստայով թղթատար. հաստատվում է Ֆրանս.
1473 Կոպերնիկոսը ծնվում է Տօրնում
1483 Ինկվիզիցիայի գործադրվելը։
1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան։
1493 Կոլոմբոսը Ամերիկայից եգիպտացորեն է բերում Եւրոպայ։
1500 Ծոցի ժամացոյցը հնարում են։
1524 Առաջ. ձեռ. լրագ. Վենետիայում։
1546 Լիւտերը վախճանվում է։
1552 Ամանների կլեկելը հնարւում է.
1590 Դիտակը գտնուեցաւ Գերմանիա։
1610 Թէյի գործած. սկսւում է Եւրոպ.
1615 Առաջին տպագիր լրագիրը։
1616 Շէքսպիրը մեռնում է։
1642 Գալիլէն մեռնում է։
1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը։
1711 Դաշնամուրը հնարում են։
1727 Նիւտոնի մահը։
1752 Ֆրանկլինը հնարում է Շանթարգ.
1779 Օդապարիկը հնարում են։
1785 Ժորժ Ստեֆենսոնը առաջին շոգեկառքը շինում է։
1789 Ֆրանսիական մեծ յեղափոխութ.
1790 Գալվանը հնարում է գալվանեան ելեքտրականութիւնը։
1800 Ջօննոնը գտնում է մարմնի պատուաստումը։
1801 Վիմագրութեան գիւտը։
1803 Անգլիաց. մետաղէ գրչի հնարելը։
1803 Շոգենաւի գիւտը։



1805 Շիլլերի մահը։
1810 Նապօլէօնի արշաւանքը դէպի Եւրոպայի-արեւելք։
1812 Արագատիպ մամուլի հնարելը։
1821 Նապօլէօն I-ը մեռնում է։
1839 Տալբոթ անգղ. հնար. է լուսանկ.
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտոնից Բալտիմօր։
1848 Ելեքտր. հեռագիրը հնարում են։
1851 Առաջին ռեվօլվերը շինվում է։
1852 Նապօլէօն III-ը Կայսր է հրատար.
1853 Արեւելեան պատերազմը։
1861 Իտալական թագ. միացումն և Վիկտօր-Էմմանուէլի թագ. հրատարակ.
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1865 Գերմանական դաշնակցութիւնը և Աւստրօ-Պրուսական պատերազմը։
1867 Ամերիկայից Անգլ. Ատլանտ. ովկ. վրայով հեռագրաթելը շինում են։
1868 Հնդկաստանի հեռագրաթելը Կովկասի վրայով շինվում է։
1870 Ֆրանս-պրուսական պատերազմը և Նապօլէօն III-ի գերութ. Սեդանում։
» Իտալիան վերջն. գրաւ. է Հռովմը։
1873 Վիէննայի համաշխարհահանդէսը։
1875 Հերցեգովինայի ապստամբութիւնը
1877 Ռուս-Տաճկական պատերազմը։
1877 Էդիսօնը հնարում է ֆօնօգրաֆը։
1878 Սան-Ստեֆան. դաշնադրութիւնը։
1878 Բեռլինի դաշնադրութիւնը։
» Ռումին. անկախ թագ. է ճանաչւ.
» Սերբիան անկախ թագ. է ճանաչւ.
» Ղարադ. անկախ թագ. է ճանաչւ.
» Բուլղարիան Վասալական իշխան.
1879 Ելեքտրակ. լապտերների հնարելը։
1880 Տելեֆօնի գիւտը։
1889 Փարիզի համաշխարհահանդէսը։
1893 Չիկագոյի համաշխարհահանդէսը։
1894 Չին-Ճապոնական պատերազմը։
» Սասնոյ կոտորածը։
1895 Տաճիկների քրիստոնեաներին կոտորելը։

## 2) Ռուսաց և Վրաց

նշանաւոր անցքերը (Ք. յ.)

40 Անդրէաս Առաք. ու Սիմ. Քանանացին Վրաստան. մոցն. են Քրիստ.
304 Պարսիկները ձեռնարկում են Տփխիսի Նարիղալա բերդի շինութ.
446 Վրացիք սկսում են գործած. Մր Ս. Մեսրոպի հնարած այբենը (խուց.)։
597 Վրացիք հայերից բաժանվում են։
623 Հերակլ Վրաց թագ. առնում է Աստղատակը և Շիրվ. խանութիւնը։
862 Ռուսաց տէրութեան սկիզբը։
988 Ռուսները Ս. Վլադ. առաջնորդ. ընդունում են յոյներից Քրիստոն.
1010 Բագրատ թագ. Վրաստ. և Իմերեթ, եկեղեցիները է հիմնում (Մցխէթ.)։
1011 Թարգմանվում է վրաց լեզուով առաջին աւետարանը։
1212 Թամար թագուհու մահը։
1222 Նիժնի-Նօվգօրոդի հիմնելը։
1224 Չինգիս-խանի յարձակմունքները և ռուսն. իրան հպատակեցնելը։
1238 Մոնղոլական լծի սկիզբը։
1289 Օսերը Գօրի քաղաքն այրում են։
1328 Մոսկվայի թագաւորութ. սկիզբը։
1428 Հրաձգ. զէնքի գործած. Ռուսա.
1469 Վրաց թագաւորութիւնը բաժանվում է երեք մասերի՝ Քարթլ, Իմերէթ և Կախէթ։
1480 Ռուսաստ. ազատվում է Մոնղոլն.
1491 Առաջին տպուած գիրքը սլաւոնական լեզուով հրատարակվում է։
1518 Պարսից Իսմայիլ-Շահը առնում է Տփխիսը և Մցխէթը։ Հալաբարի կարմիջի մօտ էլ մզկիթ է շինում։
1524 Մակարիայի տօնավաճ. բացումն։
1535 Շահ-Թամազը առնում է Տփխիսը։
1547 Յովհաննէս Գրօզնին ընդունում է առաջին թագաւորի տիտղոսը։
1556 Հաշտարխանի թագ. անկումը։
1563 Մոսկվայում սկսվում է տպագր

1583 Ռուսները առնում են Սիբիրը։
1589 Ռուսաց պատրիարքութ. սկիզբը։
1611 Լեհացիք առնում են Մոսկվան, Շվեդացիք Նովգորոդը։
1612 Ռուսաստանն ազատվ. է լեհերից։
1617 Շահ-Աբաս Ա.-ը աւերում է Վրաստ. և շատ վրացիք է տան. իւր հետ։
1632 Առաջին կանոն. զօրքը Ռուսաստ.
1634 Վրաստ. մահմեդականութ. սկիզբը
1664 Արչիլը Թելաւը շինում է աթոռանիստ քաղաք։
1672 Ծնվում է Մեծն Պետրոս Կայսրը։
1700 Ռուսաստանում սկսվում է տարեգրութիւնը (յունվ. 1-ին) Քրիստոսի ծննդից։
1701 Առաջին թատրոնը Ռուսաստան.
1703 Առաջին լրագ. հրատ. Ռուսաստ.
1705 Քաղաքական դրերի տպագրութիւնը Ռուսաստանում։
1709 Վախտանգը հիմնում է Տփխիսում տպարան, սկսում է գրել վրաց պատմութիւն և տպում է գրքեր։
1716 Ալանացիք Քարթլը ու Կախեթը աւերում են։
1723 Մահմադ-Ղուլի խանը աւերում է Տփխիսը և կողոպ. է Սիօնի եկեղեց.
1724 Վախտանգը սանում է իւր հետ Ռուսաստան Պետրոս Մեծի հրաւէրով 5 եպիսկոպոս, 6 վարդապետ, 5 սարկաւագ և 140 աշխարհական։
1725 Մեծն Պետրոս Կայսրը մեռնում է։
1743 Մահուան պատիժը ոչնչանում է։
1752 Թէյմուրազ Թագ. հալած. է պարսից Երեւանից և նորա բնակիչներին բնակեց. է այժմեան Հաւլաբ. Թաղում։
1754 Առաջին բանկի հիմնելը Ռուսաստ.
1755 Մոսկվայում առաջին համալսարան.
1767 Ծաղկի պատուաստ. Ռուսաստան.
1768 Թուղթ փողի գործածը. Ռուսաստ.
1769 Հերակլէն, Գօրի, Սղնախ, Թելաւ, Բորժոմ և ուրիշ տեղեր բերդ է շինում, հիմնում է տպարան, զինարան, Թնդանոթ է ձուլում, կտրում է դրամ, և գրքեր է տպում։
1788 Անտօն Ա. Թարգմանիչ և լեզուագէտ կաթողիկոսը վախճանվում է։
1785 Կովկասի փոխարքայութ. հիմնելը։
1786 Պետական բանկի հիմնելը։
1795 Աղա-Մահմադ խանը յարձակվում է Տփխիսի վերայ և աւերում։
1799 Վրաց Գէօրգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1801 Վրաց և ռուսաց մէջ 10 յօդ. բաղկացած դաշնագրի ստորագրելը։
1802 Ռուսաստ. մինիստրութիւն է հիմն.
1804 Մինգրելիան և Իմերէթը միանում են Ռուսաստանի հետ։
1809 Ֆինլանդիան միանում է Ռուսաստ.
1814 Ռուսները մտնում են Փարիզ։
1815 Լեհաց Թագ. միացումը Ռուսիայի հետ և Վեննայի դեսպանաժող.
1830 Առաջին և մեծ խօլերան Ռուսաստ.
1837 Պուշկինի մահը։
1841 Լերմոնտովի մահը։
1844 Կռիլովի մահը։
» Վարանցովի փոխարքայ նշանակ.
1859 Կովկասեան 69-ամեայ պատերազմ. վերջան. և Շամիլին գերի առնելը։
1861 Սարկութեան ոչնչացումը։
1864 Կովկասի վերջնական նուաճումը։
1866 Մեծ իշխ. Միխայել Նիկ. փոխարք.
1877 Ռուս-Տաճկական պատերազմը։
» Նեկրասովի մահը։
1878 Սան-Ստեփանոյի դաշնադրութիւնը
1882 Վրաց վերջին շառաւիղը-հայազգի Մարեամ Թագուհին մեռնում է և թաղվում Տփխիսի Հայոց Վանքի եկեղեցում։
1883 Տուրգենիևը մեռնում է։
1888 Կայսր Ալեքսանդր III-ը այցելում է Կովկաս։
1894 Կայսր Ալէքսանդր III-ի մահը։
1896 Թագադրութիւն Կայսեր Նիկոլայ II և Կայսրուհւոյ Ալէքսանդրա Ֆէօդորովնայի։



## Հայոց պատմութեան

Նշանաւոր անցքերը (Քրիստ. առաջ)։

—

5509 Աշխարհիս ստեղծագործութիւնը։
3257 Նոյ նահապ. տապանն է մտնում։
2492 Հայ ազգի սկզբնաւորութիւնը.
2346 Հայոց տէրութիւնը սկսում է։
» Պարոյրը հայոց առաջին թագաւոր։
149 Արշակունեաց Թագաւորութեան սկիզբը Վաղարշակից։

Քրիստոսից յետոյ։

30 Հայոց Աբգար Թագաւորը նամակ է ուղարկում Քրիստոսին։
34 Թադէոս Առաքեալը Ս. Գեղարդը տանում է Հայաստան, մկրտում է Աբգարին և ժողովրդին։
50 Թադէոս Առաք. նահատակւում է։
51 Ս. Թադէոսի Եղիշէ աշակ. նահատակ. է Արցախում (Քիշ գիւղ.)։
60 Թադէոսի աշակ. Սոսթէոսը Սիւնիքում նահատակւում է (Տաթև)։
62 Բարդուղիմէոս Առաքեալը նահատակւում է Աղբակում։
79 Երեւան քաղաքի հիմնարկութիւնը։
197 Վաղարշը հիմն. է Վաղարշապատը։
253 Խոսրով Թագաւորը հիմնում է Դավրէժ քաղաքը (Թաւրիզ)։
257 Ս. Գրիգոր Լուսաւորչի ծնունդը։
303 Ս. Էջմիածնի շինութիւնը։
» Արիստակէս հայրապ. Նիկիոյ Ս. ժող. բերում է «Հաւատոյ հանգանակը»։
» Ս. Գրիգորիսը Աղուանից կաթող.
406 Մեսրոպը գտնում է հայոց գիրը։
» Արշակունեաց Թագ. վերջանում է։
451 Վարդան. պատերազմը (յունիս.2)։
452 Կաթողիկոսական Աթոռի փոխադրումը Ս. Էջմիածնից Դուին։
458 Վարդանի դուստր Շուշանիկը նահ. և թաղ. է Տփխ. (Մետեխի եկեղ.)։
539 Եգեսիայում յայտնւ. է, Քրիստոսի Աբգարին ուղարկած դաստառակը։
551 Մովսէս կաթ. հրամանով Աթ. Տարօնացին յօրինում է եկեղ. տօմարը։
653 Կարգւում է Վարագ. Ս. Խաչի տօնը։
706 Արաբ. Կաշմ ոստիկ. Նախիջևանի եկ. 800 հայ իշխան. կրակ. նահ. է։
924 Կաթողիկոսական Աթոռը Դուինից Վասպուրական է փոխադրւում։
» Բագրատունեաց Թագ. սկիզբը։
961 Անին դառնում է Բագր. մայրաք.
968 Խոսրովանոյշը հիմնում է Սանահնոյ և Հաղպատայ վանքերը։
993 Կաթողիկոսական Աթոռը Վասպուրականից Անի է փոխադրւում։
» Բագրատունեաց Թագ. վերջանալը։
1080 Ռուբինեանք նորոգում են Հայոց Թագաւորութիւնը Կիլիկիայում։
1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անիից Հռոմկլայ—Կիլիկ.
1173 Ներսէս Շնորհալու մահը։
1294 Կաթող. Աթոռը փոխադր. է Սիս։
1311 Երուսաղէմում սկսվում է հայ-ազգի պատրիարգութիւնը։
1323 Անի քաղաքի կործանումը։
1393 Հայոց Թագաւորութ. վերջանալը։
1441 Կաթողիկ. Աթոռը վերջնականապէս փոխադրւում է Ս. Էջմիածին։
1461 Կ. Պօլսի պատրիարքութեան սկիզբը
1513 Երեւանը գրաւվում է Տաճիկներից։
1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը։
1603 Շահ-Աբասի հայերին գերի տանելը Պարսկաստ.—(Ջուղայի գաղթելը)։
1785 Սիմէօն Կաթողիկոսը Ս. Էջմիածնում տպարան է հիմնում։
1781 Նոր-Նախիջևանի հիմնելը։
1794 Հայոց առաջին լրագրի հրատարակութիւնը Հնդկաստանում։
1789 Շուշուայ ամրոցի հիմնելը։
1798 Ղարաբաղից 1100 ընտանիք գաղթում են Ղզլարու կողմերը։
1799 Առաջին պարբ. հրատ. Վենետիկում «Տարեգրութիւն» անունով։

1813 Մոսկվայի Լազար. ճեմ. բացումը:
1823 Հայր Մկրտիչ Ջամչեան վարդապետը (պատմագ.) վախճանւում է:
1825 Ներսէս Ե աշտարակեցի կաթող. հիմնում է Ներսէսեան դպրոցը:
1828 40,000 հայեր գաղթում են Ռուսաստ.
1837 Հաստատւում է Ս. Էջմ. Սինոդը:
1839 Երևանի թեմ. դպրոցի հիմնուելը:
1842 Ղարաբաղի թեմ. դպր. բացուելը:
1850 Հայոց առաջին թատրոնը Տփխիս.
1857 Ներսէս Ե կաթողիկոսի մահը:
1858 Խալիբեան ուսումնարանի բացումը:
1858 «Մեղու Հայաստանի» լր. հրատ.
1860 Տաճկահայոց սահմանադր. հաստ.
1861 Զէյթունցիք ապստամբում են:
1863 Բագուի Մարդաս. ընկ. հիմնւում է:
» Միքայէլ Նալբանդեանցի մահը:
1868 «Արարատ» ամս. հրատ. Ս. Էջմիած.
1869 Տփխիս. բացւում է Ս. Գայեանեան հայ օրիորդաց միջնակարգ դպրոցը:
1872 «Մշակ» լրագիրը հրատարակւում է:
1873 Ս. Էջմիած. Գէորգ. ճեմ. բացւ.
» «Փորձ» ամսագ. հրատարակւում է:
1875 Նոր-Նախիջևանի թեմ. դպր. բաց.
1877 Մարիամեան—Յովնանեան օրիորդական դպր. բացումը Տփխիսում:
1878 Ռուսները մտնում են Կարին:
» Բեռլինում ստորագրում են Հայոց ինքնավարութեան 61-րդ յօդ.
1879 Վերադառնում են Հայաստ. եկեղեցւոյ 35 բնասնիք հաւոմեակ. հայք Մ. Օրմանեան վարդ. առաջնորդ.
» Ստ. Նազարեանը վախճանւում է:
1881 Տփխիսում հիմնւում է Կովկասեան Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը:
» «Արձագանք» շաբաթաթ. հրատ.
1882 Տփխիսում կայանում է Հայոց առաջին ընդ. ուսուցչական ժողովը:
» Վախճան. Գաբ. եպ. Այվազովսկին:
1884 «Նոր-Դար» ամենօր. թերթի հրատ.
1888 Մակար Ա. Կաթող. ընդունւում է Տփխիսում Կ. Աղէքսանդր III-ից և այցելում է Բագու և Գանձակ:
1888 Յայտնի վիպասան Րաֆֆիի մահը:
1889 Պարսից Շահ-Նասրէդինը այցելում է Ս. Էջմիածին:
1889 Արևելագ. Ք. Պատկանեանի մահը:
» «Մուրճ» ամսագիրը հրատարակ. է:
1890 Իտալացւոց թագաժառանգին Ս. Էջմ. Մակար Կաթ. ընդունում է:
1891 Վախճանւում է Մակար I կաթող.
» Մկրտիչ Էմինի մահը Մոսկվայում:
» Բարեգործ Մ. Սանասարեանի մահը:
» Յայտնի դերաս. Ադամեանի և երգիծաբան Պարոնեանի մահը:
1892 Ջրօրհնեաց հանդէսի ժամանակ Տփխիսի վանքի կամրջի խորտակուելուց 40 հոգի խեղդւում են Կուր գետում. հոգևորականութիւնն ազատւում է:
» Կովկասում—խոլերայի կոտորած:
» Մայիսի 5-ին Ս. Էջմիածնայ համազգային նշանաւոր ժողովը Հայրիկին և Մատթէոս եպ. Իզմիրլեանին կաթ. թեկնածուներ ընտրեց:
» Գամառ-Քաթիպան վախճանեցաւ:
» Խորէն-Նարբէյ և Գ. Սրուանձտեան սրբազանների մահը:
» Խմբ. Գրիգոր Արծրունու մահը:
1893 „Հայրիկը“ Կաթողիկոս օծուեցաւ:
1894 Գէորգ եպ. Սուրէնեանը, Վրաստ. և Իմեր. թեմակալ է նշանակւում:
» (28 յունիսի) Կ. Պոլսում սարսափելի երկրաշարժը:

# XIV. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

## 1) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԵՌԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ:

### ՏՓԽԻՍԻՑ

| | Վերստ |
|---|---|
| Աբասթուման | 210 |
| Ագուլիս | 422 |
| Ալեքսանդրապոլ | 243 |
| Արդահան | 387 |
| Աշխաբադ | 1308 |
| Ախալցխա | 186 |
| Արխանգէլսկ | 3248 |
| Ախալքալակ | 248 |
| Բագու | 517 |
| Բլագովեշչենսկ | 8766 |
| Բուխարա | 1853 |
| Գանձակ | 182 |
| Եկատարինոդար (Կուբ.) | 809 |
| Բաթում | 330 |
| Բորժոմ | 140 |
| Գորի | 71 |
| Գրօզնա | 190 |
| Դարբանդ | 599 |
| Եյսկ | 851 |
| Եկատերինոսլավ | 1417 |
| Երևան | 264 |
| Եակուտսկ | 9264 |
| Զաքաթալա | 192 |
| Էջմիածին | 282 |
| Թելաւ | 93 |
| Լանքարան | 569 |
| Կաղզուան | 415 |
| Հին-Նախջևան | 422 |
| Հաշտարխան | 2735 |
| Ղզլար | 441 |
| Ղուբա | 674 |
| Մասխա | 334 |
| Մոզդոկ | 288 |
| Նոր-Բայազէտ | 231 |
| Նուխի | 160 |
| Շամախի | 398 |
| Թեմիր-Խան-Շուրա | 456 |
| Ժիտոմիր | 1988 |
| Իրկուտսկ | 6520 |
| Լիւբլին | 2414 |
| Խարկով | 1393 |
| Խերսոն | 1508 |
| Կալիշ | 2863 |
| Կամենեց-Պոդոլսկ | 2179 |
| Կարս | 346 |
| Կիեվ | 1859 |
| Կաստրոմա | 2372 |
| Կովնօ | 2437 |
| Կուրսկ | 1522 |
| Հէլսինգ-Ֆորս | 3041 |
| Ղազան | 2340 |
| Մոսկվա | 2016 |
| Նիժնի-Նովգորոդ | 2262 |
| Նիկոլայեվսկ | 10,510 |
| Նովգորոդ | 2529 |
| Նովօ-Չերքասկ | 902 |
| Նոր-Նախջևան | 941 |
| Ուրալսկ | 2490 |
| Ուֆա | 2622 |
| Չերնիգով | 1830 |
| Պենզա | 1945 |
| Պետերբուրգ | 2623 |
| Պերմ | 2917 |
| Պալտավա | 1494 |
| Պսկով | 2578 |
| Ռեվէլ | 2223 |
| Շուշի | 345 |
| Պետրովսկ | 499 |
| Պեատիգորսկ | 407 |
| Ջուղա | 461 |
| Սալեան | 443 |
| Սևան | 200 |
| Սղնախ | 100 |
| Տաթև | 433 |
| Փոթի | 286 |
| Ռեազան | 1834 |
| Ռիգա | 2701 |
| Ռաստով (Դոնի վերայ) | 939 |
| Սամարա | 2128 |
| Սարատով | 1716 |
| Սիմբիրսկ | 2134 |
| Սիմֆերոպոլ | 1222 |
| Սմրղանդ | 2207 |
| Սևաստոպոլ | 550 |
| Վարշավա | 2584 |
| Վիլնօ | 2536 |
| Վլադիկավկազ | 201 |
| Վլադիմիր | 2200 |
| Վլադիվաստոկ | 10,644 |
| Վորոնէժ | 1462 |
| Տաշկէնտ | 2490 |
| Տուլա | 1910 |
| Քիշինև | 1878 |
| Քութայիս | 202 |
| Օմսկ | 4065 |
| Օրենբուրգ | 2522 |
| Օրեօլ | 1764 |



Սինօդի անդամ և Ճեմ. նախկ. տեսուչ
ՍԱՐԳԻՍ ԵՊ. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ



2) ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԹԻՒԸ։

| Քաղաքները | (ոտնաչ). Բարձր. ծ. մակեր. | Բնակիչ. թիւը։ |
|---|---|---|
| Տփխիս | 2400 | 115,024 |
| Բագու | — | 85,679 |
| Եկատերինոդար | — | 67,610 |
| Ստաւրապոլ՝ | 2000 | 40,017 |
| Վլադիկաւկազ | 2346 | 46,981 |
| Շամախի | 2230 | 28,545 |
| Մայկոպ | — | 27,945 |
| Եյսկ | — | 36,915 |
| Շուշի | 5076 | 32,806 |
| Նուխի | 2454 | 27,757 |
| Ալեքսանդրապոլ՝ | 5079 | 23,670 |
| Գանձակ | 1446 | 25,294 |
| Քութայիս | — | 24,227 |
| Երևան | 3229 | 24,555 |
| Դարբանդ | — | 15,185 |
| Ղուբա | 1988 | 14,730 |
| Թեմրիւկ | 244 | 13,656 |
| Ախալցխա | 3376 | 23,265 |
| Մոզդոկ | 465 | 13,989 |
| Բաթում | — | 23,878 |
| Սղնախ | 2593 | 10.069 |
| Ղզլար | — | 8,778 |
| Նովոռոսիյսկ | — | 20,304 |
| Գէորգիեւսկ | 1032 | 11,290 |
| Թելաւ | 2420 | 11,014 |
| Անապա | — | 11,604 |
| Նոր-Բայազէտ | — | 7,120 |
| Հին-Նախիջևան | 2949 | 7,911 |
| Գրոզնա | 419 | 6,214 |
| Գորի | 2006 | 7,383 |
| Փոթի | — | 5,785 |
| Արմավիր | — | 6,634 |
| Ախալքալակ | 5545 | 5,303 |
| Պետրովսկա | — | 4,000 |
| Թեմիր-Խան-Շուրա | — | 3,356 |
| Կաղզուան | 4968 | 3,298 |
| Թաման | 444 | 3,231 |
| Ղարս | 6173 | 3,137 |
| Դուշէթ | — | 2,041 |
| Սուխում | — | 3,279 |
| Արդահան | 6058 | 8,844 |
| Նոր-Նախիջևան | — | 20,100 |

3) ԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ։

| Տեղերի անունները։ | Հիւս. լայն. | Արև. երկայն. |
|---|---|---|
| Ալեքսանդրապոլ՝ | 40°47 | 61°29 |
| Ախալցխա | 41 38 | 60 38 |
| Ախալքալակ | 41 25 | 60 08 |
| Բագու | 40 22 | 67 29 |
| Բորժոմ | 41 50 | 61 02 |
| Գանձակ | 40 40 | 64 01 |
| Գէորգիեւսկ | 44 08 | 61 08 |
| Գորի | 41 59 | 61 46 |
| Գռոզնա | 43 19 | 63 21 |
| Դիլիջան | 40 44 | 62 32 |
| Դարբանդ | 42 03 | 65 57 |
| Դուշէթ | 42 05 | 62 21 |
| Եկատերինոդար | 45 01 | 56 37 |
| Երևան | 40 10 | 62 10 |
| Էջմիածին | 40 09 | 61 57 |
| Թելաւ | 41 55 | 63 08 |
| Թեմըր-Խան-Շուրա | 42 49 | 64 46 |
| Տփխիս | 41 43 | 62 27 |
| Լանքարան | 38 45 | 66 31 |
| Ղազբէկ | 42 39 | 62 18 |
| Կողբ | 40 03 | 62 10 |
| Ղզլար | 43 51 | 64 22 |
| Ղուբա | 41 21 | 66 10 |
| Մոզդոկ | 43 44 | 62 19 |
| Հին-Նախիջևան | 39 12 | 63 04 |
| Նոր-Բայազէտ | 40 20 | 62 47 |
| Նովորոսսիյսկ | 44 42 | 55 26 |
| Նուխի | 41 12 | 64 51 |
| Շամախի | 40 37 | 66 18 |
| Շուշի | 49 49 | 65 24 |
| Պետրովսկա | 42 59 | 65 09 |
| Պեատիգորսկ | 44 02 | 60 45 |
| Սևան | 40 33 | 62 50 |
| Սղնախ | 41 36 | 63 34 |
| Ստաւրապոլ՝ | 45 03 | 59 38 |
| Վլադիկավկազ | 43 01 | 62 21 |
| Փոթի | 42 08 | 59 19 |
| Քութայիս | 42 16 | 60 22 |
| Օրդուբաթ | 38 54 | 63 41 |

# ԱՂԻՒՍԱԿ

ՈՐ ՑՈՅՑ Է ՏԱԼԻՍ ԸՍՏ ԹԻՖԼԻՍԻ ՄԻՋՕՐԷԱԿԱՆԻ, ԵՐԿՐԱԳՆԴԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԷՍ ՕՐՈՒԱՅ ԺԱՄԱՆԱԿԸ։

| | ժ. | ր. | վ. | | | ժ. | ր. | վ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ախալքաղ . . | 12 | 54 | — | ցեր. | Ս.-Պետերբուրգ | 11 | 2 | — | ցեր. |
| Բաքու . . . . | 12 | 20 | 8 | » | Սուխում . . . | 11 | 44 | 52 | » |
| Բաթում . . . | 11 | 47 | — | » | Թեմ. խան-շուրա | 12 | 9 | 12 | » |
| Վարշավ . . . | 10 | 24 | 52 | » | Թիֆլիզ . . . | 12 | — | — | » |
| Վլադիկավկազ. | 11 | 59 | 28 | » | Խարկով . . . . | 11 | 25 | 44 | » |
| Գորի. . . . . | 11 | 57 | 12 | » | Երևան . . . . | 11 | 48 | 48 | » |
| Եկատերինոդար | 11 | 36 | — | » | Արտասահման | | | | |
| Գելսինգֆորս . | 10 | 40 | 36 | » | Փարիզ . . . . | 9 | 10 | 8 | առ. |
| Գանձակ . . . | 12 | 6 | — | » | Լոնդոն . . . . | 8 | 58 | 8 | » |
| Իրկուտսկ (Սիբ.) | 3 | 57 | 52 | եր. | Մադրիդ . . . | 8 | 43 | 28 | » |
| Քերչ . . . . . | 11 | 26 | 44 | » | Բերլին . . . . | 9 | 54 | — | » |
| Քութայիս . . | 11 | 41 | 40 | » | Վիեննա . . . | 10 | 6 | — | » |
| Կրասնովօդսկ . | 12 | 32 | — | » | Հռոմ. . . . . | 9 | 50 | 16 | » |
| Մերվ. . . . . | 1 | 8 | — | » | Բրիւսսել . . . | 9 | 18 | 8 | » |
| Մոսկուա . . . | 11 | 31 | 14 | » | Կ. Պօլիս . . . | 11 | — | 8 | » |
| Օդեսսա. . . . | 11 | 3 | 41 | » | Շտոկհօլմ . . . | 10 | 12 | 8 | » |
| Հաշտարխան . | 12 | 12 | 54 | » | Պեկին . . . . | 4 | 50 | — | եր. |
| Ստավրապօլ. . | 11 | 48 | 18 | ցեր. | Նիւ-Եօրկ . . . | 4 | 45 | — | եր. |

# XV. ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ

(Հասարակ պարտամուրհակի օրինակ)

Թիֆլիս, 1-ին Յունիսի 1896 Թ.

Մուրհակ 1000 րուբլ. արծաթի։

Յուլիսի մէկից, հազար ութհարիւր իննսուն և վեց ամի, երեք ամիս ժամանակով, այս իմ պարտամուրհակովս պարտաւորւում եմ վճարելու Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Յովհաննէս Մաթէոսեան Կիրակոսեանին կամ որին նա կը հրամայէ հազար րուբլի արծաթ, որը ես նրանից ապրանքով (կամ զուտ փողով) լիովին ստացել եմ։

Ստորագրութիւն — Տփխիսի քաղաքացի Պետրոս Պօղոսեան Նիկողոսեան։

## ԴՐՈՇՄԱԳԱՒՈՐ ԹՂԹԵՐԻ ՀԱՐԿԸ

### Մուրհակներ

| Արժողութ. գումարը. | | | | Թերթի գինը |
|---|---|---|---|---|
| | | 50 | ր. | 10 |
| 50-ից մինչև | | 100 | » | 15 |
| 100 | » | 200 | » | 30 |
| 200 | » | 300 | » | 40 |
| 300 | » | 400 | » | 54 |
| 400 | » | 500 | » | 70 |
| 500 | » | 600 | » | 80 |
| 600 | » | 700 | » | 90 |
| 700 | » | 800 | » | 1— |
| 800 | » | 900 | » | 1,15 |
| 900 | » | 1000 | » | 1,20 |
| 1000 | » | 1500 | » | 1,40 |
| 1500 | » | 2000 | » | 2,50 |
| 2000-ից մինչև | | 3200 | ր. | 3,70 |
| 3200 | » | 4000 | » | 5,15 |
| 4000 | » | 6400 | » | 6,80 |
| 6400 | » | 8000 | » | 9— |
| 8000 | » | 10000 | » | 11,40 |
| 10000 | » | 12000 | » | 13,80 |
| 12000 | » | 15000 | » | 15,66 |
| 15000 | » | 20000 | » | 21— |
| 20000 | » | 25000 | » | 37,60 |
| 25000 | » | 30000 | » | 33,60 |
| 30000 | » | 40000 | » | 42— |
| 40000 | » | 50000 | » | 84— |

## ՔԱՇԵՐԸ

### Դեղատուն

1 գրվ. հաւասար է 84 մսխ. 12 ունցի
1 ունցն » 8 դրախմին
1 դրախման 3 սկրուպուլին
1 սկրուպուլն 20 գրանի
1 գրանը » 1 ցորենաքաշի

### Զանազան երկրների քաշերը

Անգլիայի 1 վաճ. գրվ. 16 ունց. հաւասար է ռուսաց 1 գր. 10 մսխ.

| | | | |
|---|---|---|---|
| Ֆրանսիացւոց 1 գր. | — | » ½ | » |
| կիլօգրամը . . | 1 | » 41 | » |
| Պրուսիայի 1 ֆունտը | 1 | » 13 | » |
| 1 ցենտներ. . | — | » ½ | » |
